



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ**




Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, [ss@ysmu.am](mailto:ss@ysmu.am)

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 14 ՆԻՍՏՈՒՄ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ.Ավետիսյանի «Կրթության որակի բարելավմանն ուղղված հիմնախնդիրների լուծման մեխանիզմները» թեմայով զեկույցը, գիտության գծով պրոռեկտոր Կ.Բ.Ենկոյանի կողմից ներկայացված կանոնակարգերը և ուղեցույցը, գիտական քարտուղար Տ.Գ.Ավագյանի զեկույցումները,

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. 2017-2018 ուստարվա հաշվետու ժամանակաշրջանում ուսումնական աշխատանքների կազմակերպման (ղեկավար՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ Լ.Ռ.Ավետիսյան) աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար (18-11-14-01):
2. Հանձնարարել աշխատակազմի ղեկավար՝ Շ.Ա. Դանիելյանին, պրոռեկտոր Գ.Ա. Ավետիսյանին՝ համատեղ ամբիոնների կողմից ներկայացրած պահանջագրերի արդյունքների վերլուծության հիման վրա՝ Հիմնադրամի 2019 թվականի բյուջեի նախագծում առանձին հոդվածով նախատեսելու նպատակով մշակել և ներկայացնել ամբիոնների նյութատեխնիկական բազաների և տարածքների բարելավմանն ուղղված ֆինանսական միջոցների չափերի վերաբերյալ առաջարկություններ (18-11-14-02):
3. Հանձնարարել՝
  - 1) «Բժշկական տեսական առարկաների ուսումնամեթոդական հանձնաժողովին» (նախագահ՝ Գ.Ա.Նավասարդյան) մինչև 2019 թ-ի փետրվարի 20-ը համալսարանի ուսումնամեթոդական խորհրդին ներկայացնել «բժիշկ» և «բժիշկ-ստոմատոլոգ» որակավորումներով կրթական ծրագրերի վերջնարդյունքներից բխող, ուղղահայաց և հորիզոնական ինտեգրման սկզբունքի կիրառմամբ, «Ընդհանուր քիմիա» և «Կենսաբանություն» առարկայական ծրագրերի մեջ փոփոխություններ կատարելու և մոդուլներով դասավանդելու անհրաժեշտության հարցը(18-11-14-03),
  - 2) Թերապևտիկ առարկաների (նախագահ՝ Հ.Մ. Մանվելյան) վերաբերյալ և Կրթության գիտությունների (նախագահ՝ Ս.Ա. Ստեփանյան), մանկաբուժություն, գինեկուլոգիա և



մանկաբարձություն առարկաների (նախագահ՝ Գ.Գ. Ամարյան) մեթոդական հանձնաժողովներին.

ա.մինչև 2019 թ-ի փետրվարի 1-ը քննարկել և համալսարանի ուսումնամեթոդական խորհրդին ներկայացնել նույնանուն ամբիոնների առարկայական ծրագրերի, դրանց դասավանդման մեթոդաբանության, թեստային շտեմարանի (կիսամյակային և ամփոփիչ քննությունների) համահարթեցման և նույնականացման խնդիրը (18-11-14-04),

բ.մինչև 2019 թ-ի դեկտեմբերի 25-ը քննարկել ամփոփիչ առեստավորման գործնական ունակությունների ցանկում փոփոխություն կատարելու հարցը և հստակեցնել պահանջվող գրականության ցանկը (18-11-14-05),

- 3) Ուսումնամեթոդական վարչության մասին (բաժնի պետ՝ Կ.Մ. Բարոյան) և համակարգչային քննությունների կազմակերպման բաժնին (բաժնի պետ՝ Մ.Հ. Հայրապետյան) քննաշրջանների ավարտին ներկայացնել այն ամբիոնների ցանկը, որոնց մոտ, բողոքարկման գործընթացում, կիսամյակի ընթացքում կարծանագրվի 6 և ավելի թեստային սխալ և համապատասխան ամբիոնի հարցը քննարկել համալսարանի ուսումնամեթոդական խորհրդում (18-11-14-06),
- 4) Հանձնարարել հաշվապահությանը (գլխավոր հաշվապահ՝ Լ.Է. Պարսեղյան) 2018-2019 ուստարվանից յուրաքանչյուր կիսամյակի վերջում օտար լեզվով դասավանդող դասախոսներին յուրաքանչյուր խմբի դասավանդման համար վճարել ռեկտորի կողմից սահմանված լրավճարը՝ ըստ 05.10.2018 թ-ի ռեկտորատի նիստում ռեկտորի կողմից հաստատված չափորոշիչների (18-11-14-07):


4.Համալսարանի դասախոսական կազմի ուսումնագիտական գործունեության արդյունավետությունը խրախուսելու չափորոշիչներ, մեխանիզմներ մշակելու և ներդնելու նպատակով՝

1) հանձնարարել ուսումնական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտորներին (Լ.Ռ. Ավետիսյան, Կ.Բ. Ենկոյան) մշակել դասախոսի ուսումնագիտական գործունեության արդյունավետության գնահատման չափանիշներ և մեխանիզմներ (18-11-14-08),

2) դիմել հոգաբարձուների խորհրդին՝ Համալսարանի հաջորդ տարիների բյուջեներում համապատասխան միջոցներ նախատեսելու առաջարկով և խրախուսման մեխանիզմներ ներդրելու համար անհրաժեշտ իրավակարգավորումներ սահմանելու կամ հանձնարարականներ տալու առաջարկությամբ (18-11-14-09),

3) ստեղծել դասախոսի ուսումնագիտական գործունեության արդյունավետության արդյունքների ամփոփման հանձնաժողով (18-11-14-10) և այն հաստատել ռեկտորատում:

5.Հանձնարարել կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնին (կենտրոնի ղեկավար՝ Ա.Ա. Հայրապետյան) մինչև 2018 թ-ի դեկտեմբերի 10-ը վերանայել կրթության որակի գնահատման և ապահովման ֆակուլտետային հանձնաժողովների կազմը՝ նորացնելով և ավելացնելով դասախոսական կազմի և ուսանողների ընդգրկվածությունը (18-11-14-11):



6. Հաստատել՝

- 1) <<Գիտության վարչության կանոնակարգը>> (18-11-14-12),
- 2) <<Գիտակոորդինացիոն խորհրդի կանոնակարգը>> (18-11-14-13),
- 3) <<Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի գիտակրթական ծրագրերի ուղեցույցը>> (18-11-14-14):

7. Շնորհել անվանական կրթաթոշակներ հետևյալ ուսանողներին (18-11-14-15)՝

1) Ընդհանուր բժշկության ֆակուլտետի՝

ա. Աջամյան Հրաչյա Ստեփանի	Մխիթար Հերացու անվան կրթաթոշակ
բ. Ստեփանյան Հովհաննես Արտուշի	Մխիթար Հերացու անվան կրթաթոշակ
գ. Մխիթարյան Բենիկ Ռոբերտի	Մխիթար Հերացու անվան կրթաթոշակ
դ. Սիմոնյան Զույլետա Ռուլանդի	Վահան Արծրունու անվան կրթաթոշակ
ե. Գրիգորյան Մարկ Մայիսի	Լևոն Հովհաննիսյանի անվան կրթաթոշակ
զ. Համբարձումյան Լիանա Գարիկի	Բարդուղիմեոս Ֆանարջյանի անվան կրթաթոշակ
է. Գասպարյան Սվետլանա Սերգեյի	Գրիգոր Արեշյանի անվան կրթաթոշակ

2) Ստոմատոլոգիական ֆակուլտետի՝

ա. Վլասյան Լիլիթ Հրայրի	Մխիթար Հերացու անվան կրթաթոշակ
բ. Ֆիդանյան Անահիտ Համբարի	Ռուբեն Յոլյանի անվան կրթաթոշակ

8. Հաստատել ստոմատոլոգիական և ընդհանուր բժշկության ֆակուլտետների դեկանների ընտրության արդյունքները՝ հիմք ընդունելով հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը (18-11-14-16)՝

- 1) Ստոմատոլոգիական ֆակուլտետի դեկան՝ Լազար Կարլենի Եսայան
- 2) Ընդհանուր բժշկության ֆակուլտետի դեկան՝ Կարինե Մինասի Բարոյան:

9. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին (18-11-14-17):

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Տ.Գ. ԱՎԱԳՅԱՆ